



ՕՐԱԹԵՐԹ

20 փարայ

թիվ 249

ԵՐԿՈՒՇ ԱՐԹԻ

26 ՕԳՈՍՏՈՍ 1868

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 26 ՕԳՈՍՏՈՍ

ՀԵՌԱՆԳՐԱԿԱՆ

Լոնտրա 1 սեպտ.

Բեդրոսյանը կը հեռագրէր թէ կայսերական հրովարտակ մը հրատարակուեցաւ. որով զինուորաց հրաման կը տրուէ առանց պայմանաժամի իրենց ընտանեաց քով դառնալու: Չինուորական ծառայութեան պայմանաժամն ալ 13էն 10 տարւոյն իջաւ:

Լոնտրա 2 սեպտ.

Գաղղիոյ կուլմայի պաշտօնեայ Պ. Մայն ճառ մը խօսեցաւ, ուր իր վստահութիւնը յայտնեց խաղաղութեան տեւակաւութեան վրայ:

Լիվերքուլի մէջ բամպակին գինը լաւ կը բռնուի:

Սամ. Բոնա. 383/ի գոցուեցաւ:

3 սեպտ.

Նարոյէն կայսրն այսօր Շալոնի բանակը գնաց, ուր կապաւորին նաեւ Բրուսիայ եւ Սաքսոնիայի թագաւորները:

Վիէննա 3 սեպտ.

Բրուսիայ եւ Գաղղիոյ յարաբերութիւնները խիստ ցրտացած են Պէլճիքայի եւ հիւսիսային Շվեդիի խնդրոց պատճառաւ: Նարոյէն իշխանը Գերմանիոյ նաւահանգիստները կը չըջի: Կըսուի թէ Պէրլի-նի արքունիքը Սուրբ Դաւիթաբութիւնը պիտի նորոգէ, եւ դաշնակիցները որոշում պիտի տան պատերազմական պատրաստութիւնները դադարեցնելու:

Աւստրիոյ մէջ քաղաքական հորիզոնին վրայ սեւ կէտեր կը նշմարուին:

Յրանչիսիոս-Յովսէփ կայսրը Լեմպերկ պիտի երթայ:

Եւրայէն սեպտ. 2 թուով կը դըրեն թէ Լիսաբոն ծովապատահը Ալիսիո ըրած երեսուն եւ չորսորդ ուղեւորութենէն դարձեր է մթերք եւ պաշար հանելէ ետեւ:

Նախկին պաշտօնէից զուլի Պ. Քուլմանտուրոս Լիթլիոնի մէջ ընտրելի ներկայացած ըլլալով կառավարու-

նը մերժեր է անոր ընտրական քուէտուլի մը տալ: Իր կուսակիցները ոսկի քուէտուլի մը տուեր են, բայց զոյն Լիթլիոնի գաւառապետական ապարանքը դնող մարդուն վրայ ատրճանակ մը պարսկութեամբ սպանուեր է: Ետք վրայ Պ. Քուլմանտուրոս ընտրելութենէ քաշուելով՝ Քալմանի մօտ իր ազալակը դրայեր է: Կառավարութիւնն ալ իր ընթացքը յանցաւոր համարելով հրաման ըրեր է որ Պ. Քուլմանտուրոսը բանտարկուի:

Կերիկի որ Պ. Քուլմանտուրոսի կուսակիցներէն 150ի չափ զինեալ անձինք գաւառապետական ապարանքը իրենց ուղեր են, բայց զօրքերը դէմ կեցեր եւ բաւական խռովութենէ ետեւ ազմարարներուն զէնքերն առնուեր են:

Յունաստանէն եկած վերջին լուրերն ապահովէ չեն: Օրոյցներ կան որ պետական հալուած մը պիտի ըլլայ եւ թագաւորը գիկտատուութիւն ձեռք պիտի առնու, կամ սահմանադրութիւնը փոխուելով ազատութիւնը պիտի սեղմուի:

Արիւտիներուն համար հաստատած մասնաժողովն ապստամբաց յաջողութիւնները հրատարակելէ չգաղթիր: Բայց առաւ լուրերը վստահութեան արժանի չեն. քանզի կը ծանուցանեն թէ 1500ի չափ ապստամբներ Երթատի աւերակներուն վրայ ժողովուելով 4000ի չափ Օսմանեան զօրաց բանակեալը կրցեր են թափանցել: Աւրիշներն ալ ասոր նման:

Գեր. Հասուն անցեալ հինգշաբթի օրը մայրաքաղաքէ մեկնել է դէպի Լիսաբոն եւ Երուսաղէմ երթալու:

Գեր. Հասուն իր հետ տարեր է նաեւ Հինձըի եղբունդործ Յոհաննէս չվարդապետը, որ ինչպէս յայտնի է, թիարանէն հանուելով աստիկանու-

թեան բանալ փոխադրուեր, եւ անկէ ալ Գեր. Հասունի յանձնուեր էր:

Չգիտենք թէ աղբային Պատրիարքարանն այս խնդրոյն վրայ Բ. Դրան գիտողութիւն մ'ըրած կամ տեղեկութիւն մը խնդրած է:

Ե. այժմ կըսենք, փառք Ճիզվիթութեան, որոյ բարերար հովանին իր ստորագրութեամբ ամեն կարգին վրայ կը ծաւալի արեւուն ճառագայթներուն պէս՝ որ չարերուն համար ալ կը ծագի: Եյս մէկ գործն ամեն բան կըսէ:

Ար. Եսենք թէ անցեալ շաբթու Եւթիմ-Տաղի Օւսպիթի մը գինովալով սուրբ քաշեր եւ հայ կիներու վերայ յորձակեր է՝ պռնալով որ «Ճըլմարիտ կրօնքն» ընդունին, եւ քանի մը կիներ ալ վիրաւորեր է:

Յանցաւորն անմիջապէս բռնուելով աստիկանութեան դուռը զրկուեր է, եւ կը յուսանք որ կայսերական կառավարութիւնը յորինակ այլոց խափելը պատժէ այս մոլեռանդ գինեմոլը: Քանզի ինչպէս Լեմպի Հերբլա ալ գիտել կուտայ, Բերայի մէջ ալ ուրիշ Գալլա մ'այսպիսի բարբարոսութեան մը յանդգներ է, ուրկէ կը տեսնուի որ աստիկանութեան զինուորները ասկաւին մեծ կարգապահութեամբ մը չեն փայլիր:

Աւրաթ օրը Իւսկիւտարի Ս. Խաչ թաղի ազնկանց վարժարանին հարցաքննութեան ներկայ դռնուելով բերկութեամբ սրտի տեսանք որ աշակերտակները կրթութեան եւ ուսմանց մէջ զարգանալու վրայ են: Քննիչներուն ըրած հարցմանցորուած պատասխանները բաւական գոհացուցիչ էին: Վրասեղանին վրայ դրուած հայերէն եւ զաղղիներէն շարադրութիւնները ցոյց կու տային որ աշակերտութեան մտաւա-

րական կարողութիւնն ալ բաւական
զարգացած է : Բայց ասկէ առաջին դա-
սու աշակերտութեանց նիւթեր առա-
ջարկուեցան որոց վրայ յանպարտաւոր
շարագրութիւններ ըրին , և քննիչնե-
րուն հաւանութեանն արժանի եղան :

Այս արդարեւ տնտեսաբան Խը-
նամակալուհի տիկնանց ուսումնասիրա-
կան ջանքի և վարժարանին գաղափար
Մեծ . Գ . Գրատէրեան էֆէնտիկն
խնամոյն պատուին է . ուստի հարկ կը
համարիմք հրապարակային շնորհակա-
լութիւն յայտնել իրենց , յուսալով որ
այս ընթացքին մէջ կը յարատեւեն և գե-
ղեցիկ սեռին գաղափարախօսութիւնը քիչ
ատենէն Խաւկապարի մէջ նշանու որ
քոյլ մը կ'առնու :

Այսպէս հինգշաբթի առաւ Լա-
թիւրքի օրագրին մէջ հետեւեալ յօդ-
ուածը տեսնուելով՝ հայերէն թարգ-
մանութիւնը մեզ զրկուած է 'ի հրա-
տարակութիւնի :

Թմարգրապետ տէր .
Այն պատուաւոր հարկը՝ զոր դուք
ինքնին ձեր վրայ դրած էք՝ նպատակա-
տոյց լինել ամենուրեք ընդարձակ ու լու-
սավիտ գաղափարներու , եւ խարանաւ
դրուել միշտ այն գաղափարներ որ նա-
խապաշարմանց և կուսակցութեան ոգե-
ւոյն ներշնչութիւնքն են , կը թելադրէ
ինձ ինչդեպ զբարեւոր օգնականութիւն
արգոյ օրագրին ձերոյ առ 'ի նշանակել կը-
րօնական մոլեռանդութեան մէկ գործը՝ որ
այս օրերս տեղի ունեցաւ մայրաքաղա-
քիս մէջ :

Հայազգի օրերդ մը՝ հոռմի մը հետ
ամուսնանալ ուղեւոր , չկրցաւ ընդունիլ
պատկի խորհուրդը՝ մինչեւ որ յունաց Եյ-
րի քաղաքի եկեղեցւոյն մէջ եկեղեցւոյ
չմկրտուեցաւ , մինչդեռ արդէն ծնած ժա-
մանակը մկրտուած էր նա իւր մայրենի ե-
կեղեցւոյն մէջ :

Այսպիսի գործ մը բոլորովին հակառակ
է քարոզութեան առաքելոյն հեթանոսաց
(- Եֆէսոս , Գ . Ե .) եւ դաւանութեան
հանգանակի տիեզերական ժողովոյն կոս-
տանդնուպոլսոյ , որ կը պատուիրին մեզ
հաւատալ էֆէսոսեան : Աւստի եւ եկեղե-
ցի մը որ արժանի է մեծարանաց՝ պէտք
էր անտարակոյս որ իւր բոլոր շանթերը
այսպիսի գործոյ մը հեղինակացը վրայ թո-
թափէր :

Բայց ոչ , Յուսիսի մոլեռանդութեան
մը այս գործը՝ որ թշնամանալ եկեղեց-
ւոյն որդւոյց սիրտը սրտմտութեամբ կը լի-
ցնէ , եւ մինչեւ անգամ յունաց Անտիօքի
օրագրի կը գայի ակեղեցնէ , այս գործը
կըսեմք , բաւական չըլլար յունաց պատուի-
արքարանին ու շարքութիւնն արթնցնե-
լու : Իբրեւ թէ՛ ամենարեւական բան մը
ըլլար այս , եւ այնպիսի խնդիր մը՝ զոր
արդէն չառնեց լուծած ըլլար յունական
եկեղեցին , որ երբ ուղղափառ հայ մը
յայն ուղղափառաց ծէսն ընդունիլ փափա-
քի՝ հարկ ըլլայ 'ի բայց թողուլ ոչ միայն
իւր եկեղեցին , իւր լեզուն , իւր սովորու-
թիւնները , այլ նաեւ իրեն հեթանոս մը եւ-
րոպեացի , եւ մերժելով իւր նախկին

բարբարոս հայկական անունը՝ ընդունի
անուշ , քաղաքակրթեալ եւ սուրբ անուն
մը , եւ այս պայմանաւ միայն կարենայ
գառնալ եւ լինել քրիստոնեայ մը :

Կարելի՞ է երեւակայել քան զայս առաւել
ծանր նախատինք մը ընդդէմ պատուոյ այն
ազգին որ ամենայն իրաւամբ ինքզինքը եր-
ջանիկ կը համարի որ այնպիսի առաքե-
լական եկեղեցի մը ունի՝ որոյ սկզբունքն
է ներողականութիւն եւ գլխավորն ամե-
նաբարձակ 'ի վերայ ամենեցուն որ կը
հաւատան եւ կը յուսան յանուն Քրիստի
եւ օրէնսդրի մարդկայինս սեռի :

Եթէ հոռմիական եկեղեցին իւր զը-
րութիւնական անթիքութեամբ հանդիմ
կրցած չէ երբէք միտել Հայաստանեայց
եկեղեցւոյն խորհուրդը վաւերականութիւ-
նը , ինչպէս կարելի էր սպասել աւելի
թշնամանք մը բուն իսկ այն եկեղեցիէն
որ քիչ մը յոռմով՝ Զատիկական տօներուն
առթիւ՝ կողմնէր զեկեղեցին Հայաս-
տանեայց իրեն զօրք իւր 'ի Գլխաւոր Յի-
սուս :

Մեք չեմք բնաւ տարակուսիր որ յու-
նաց ազգին լուսավիտ մասը (որ շատ բաղ-
մաթիւ է) ոչ միայն Անտիօքի օրագրին
հետ կը մեղադրէ կղերին մէջէն սմանց
կոյր նախանձապաշարութիւնը , այլ եւ կող-
բայ այն ցուրտ անուշաբերութեանը վը-
րայ զոր ձեռնհաս առեանը կը զուգորդէ
յայտ մասին , որ եւ այնու՝ կարծես թէ
կը քաջալերէ այնպիսի հակաքրիստոնէա-
կան գործ մը՝ որ կրնար շատ աղետալի
հետեւանքներ ունենալ , գործ՝ զոր հարկ
էր պատժել խառնութեամբ եւ հրապարա-
կաւ . վասն զի այսպիսեաց համար էր որ
առաքելաւ կողադակէր , « զնախնին Աս-
տուծոյ ունին , այլ ոչ գիտութեամբ » :
(Ա . Զաւ . Ժ . 2)

Այո , այս կոյր եւ անմիտ նախանձա-
յաւգութիւնը ուրիշ վախճան չունի՝ բայց
եթէ բորբոքել վերստին այն առեւտրութիւն-
ներն՝ որ դեռ եւս կը միան , եւ անկար-
կատելի ընել այն խրամաւոր՝ զոր յանուն
կրօնից մոլեռանդութիւնը բացած էր եր-
կոյց բարեպաշտ ազգաց մէջ՝ որոնք անդ-
րանիկ զաւակունք են մի եւ նոյն պատ-
կառելի մօր մը , մեծի եւ սրբոյ եկեղեց-
ոյն Արեւելից : Երկուսն եւս մի եւ նոյն
թիւոյ տակ կը պատասպարին , երկուսն
ալ չաներ մի եւ նոյնն են , եւ կը պահան-
ջեն որ խաղաղութեամբ իրարու հետ աղ-
բին եւ հղբարական միութեամբ . . .

Այ , երբ մէկը ուրիշի եկեղեցին կը
թշնամանէ՝ անով իւր եկեղեցւոյն դատը
պաշտպանել ըսել չէ : Աղեր մը՝ որ փոխանակ
յոռմով ընթանալու յառաջադիմութեան եւ
լուսոյ ճանապարհին մէջ , աւելի կընտրէ
այն մոլոր ճանրուն մէջ քայլել՝ զոր մի-
ջին գարու սուրն ու հուրը բացին եւ նա-
հառակ մարդկոց թափած արեւները
նրկեցին , այն կղերք՝ իննեւտաններդ
զարուս բարձրութեանը հասած չէ բնաւ :

Այժմու ժամանակին կղերին մեծ
առաքելութիւնն է քարոզել խաղաղու-
թիւնն ու եղբարութիւնը , խաղաղեցրնել
ազգաց մէջի հին առեւտրութիւնները , անե-
րեւոյթ ընել արեւի սեւ հետքերը , եւ
մոռցնել առաջին փոխադարձ մեղադար-

* Անտիօքի կը պատմէ որ վերստին
ազգիկը յունաց մկրտութիւնն ընդունած
ժամանակ Պեթլուի անունն առնել է , որ
ինչպէս յայտնի է՝ Ողիստեւս կոստալաթիս
զաւորին կնոջն անունն էր , ուստի եւ ան-
հաղթանակ մնաց ինքն :

առթիւնքը՝ զոր բարբարոս դարեր մեզ
կտակեցին : Միով բանիւ , լուեցնել տալ
նախապաշարմանց ձայները եւ կուսակ-
ցութեանց կողմնակալ ոգին , եւ ամենուրե-
քստին մէջ թագաւորեցնել առաջ տիեզե-
րաց օրինադրքին անխախտելի , վեհ եւ
յաւերակական օրէնքը , որ է՝ սէր . . .

Եկեղեցի մը որ իւր գլխոյն եւ Աստ-
ուծային հիմնադրին ոգին հաւատարմու-
թեամբ կը պահպանէ՝ իւր մէջը կը կրէ
նաեւ կեանքն ու ճշմարտութիւնը : Բայց ե-
կեղեցի մը՝ որ չգիտեր մեծարել ուրիշ ե-
կեղեցի մը՝ ինքն ալ կը կորսցնէ ուրիշն
մեծարելու իրաւունքը : Քրիստոս Յի-
սուս է որ կը վճռէ . « որով չափով չա-
փէք՝ չափեսցի ձեզ » :

Ի Պէշիկիմայ Խորէն Եւր Պէշ
20 օգոստոս 1888 Երեւան Հայաստան
Յեղեցոյ

ՆԱԽՆՈՒՑՈՒՄ

Ռուսիոյ առաջին եւ երկրորդ փոխա-
ռութեանց տոկոսաւոր եւ վիճակաւոր տոմ-
սակներուն եւ վիճենայի տոկոսաւոր եւ
անտոկոս մայր տոմսակներուն եւ Բոս-
մէսներուն բուն տէքստիքին է Ղալաթիս
Քոմիսիօն խոն թիւ 16 Մատէլլայի դե-
ղարանին քով տեղանաւոր սինեօր ձօր-
ճի ՃԱՆԵԹՈՒ զրաւնեակը :

Այս գրասենեակը ծախուած տոմսակնե-
րէն՝ Ռուսիոյ 1886ի հարկերին հինգ տոկո-
սով փոխառութեան տոմսակները տարին
երկու անգամ վիճակահանութիւն ունին ,
մէկը տեղաւ . 1ին , եւ միւսը մարտ 1ին .
եւ ամեն մէկ անգամուն 300 տոմսակ կայ
վստուրկող . առաջինը 200,000 քառադն .
երկրորդը 75,000 . երրորդը 40,000 . չոր-
րորդը 25,000 . երեք հաւր 10ական հա-
զար . տասը հաւր 8ական հազար . ութ
հաւր 5ական հազար . քսանը 1,000ական
եւ 260ր 500ական քառադն :

Այս տոմսակները երեք կերպով չա-
հաւոր են . նախ՝ հարկերին 3 տոկոս ու-
նին . երկրորդ՝ վիճակահանութեան մէջ
վստուրկող թիւերուն ստակը հոս անմիջա-
պէս կը վճարուի վերստին գրասենեա-
կէն . երրորդ՝ վստուրկող տոմսակը նորէն տի-
րօք կը արտի եւ կրնայ դարձեալ վիճա-
կահանութեամբ վստուրկի :

Առաւել մանրամասն տեղեկութիւն ու-
ղող կրնայ վերոյիկեալ սինեօր Ճ . Ճանէթի-
թիւնն ստանալ :

Վիճենայի Բոսմէսներուն գինն է 30 դ .

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ			
ԵՍԶԱՄԸ ՌԻՍԿՈՒՄԵՆԷ			
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ			
24	չարաթ իրիկուն		
»	գոցուեցաւ 42	33	4
26	» երկուչարաթի կէս օր		
	բայուեցաւ 43	04	

Թմրագիր-Տնօրէն
Կ . Ս . ԻՍԿԱԿԻԱՆ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ
Կ . ՊՈԼԻՍ ԶԻՆԵԼԻ ԽԱՆ